


ՔԱՂԱՔՆԵՐ և  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ.  
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ  
ՄԵՌԱԿԱՆ  
ԲՌՆՈՒԹՅԱՆ  
ԴԱԴԱՐԵՑՄԱՆ  
ԴԱՇՆԱԳԻՐ



one in five  
un sur cinq

Համաձայն առկա գնահատումների՝ Եվրոպայում հինգ երեխայից մեկը դառնում է որևէ ձևով կատարվող սեռական բռնության զոհ: Եվրոպայի խորհուրդը մեկնարկել է **ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ** քարոզարշավը՝ բարձրացնելու համար յուրաքանչյուրի իրազեկվածության աստիճանը և աջակցելու համար Եվրոպայի խորհրդի 47 անդամ և այլ պետությունների կողմից Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայի իրականացմանը, որը հայտնի է որպես Լանզարոտեի կոնվենցիա:

Որպես ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին իր ավանդի մի մաս՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մշակել է **Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների մի դաշնագիր**: Այն ներառում է տեղական և տարածաշրջանային մակարդակում իրականացվելիք մի շարք նախաձեռնություններ և քաղաքական ծրագրեր՝ ստեղծելու համար երեխայի հանդեպ բարյացակամ ծառայություններ, պաշտպանելու երեխաներին և օգնելու կանխել սեռական բռնությունը համայնքի շրջանակներում:

[www.coe.int/congress-oneinfive](http://www.coe.int/congress-oneinfive)  
[congress.oneinfive@coe.int](mailto:congress.oneinfive@coe.int)

